Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[1] Դուրս գրման ամսաթիվ			[2] Սերիա	[3] Համար
27	Հուլիս	2018 թ.	Ա	6814818585
[4] Մատակարարման ամսաթիվ				
27	Հուլիս	2018 թ.		

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն:
	Լիազորագիր — Համար:
	Լիազորագիր — Ամսաթիվ:

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	81100318 դատահոգեբուժական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

27/07/2018 12:14:13

ՈՐՈՇՈՒՄ
ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 մարտի 2018թ. ք.Արմավիր

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Բ. Հարությունյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 81100318 քրեական գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

2018թ. փետրվարի 26-ին՝ ժամը 12:45-ին, <<Մեծամոր բարեկարգում>> ՀՈԱԿ-ի աշխատակից Մարտին Ազատի Մարուքյանից ՀՀ ոստիկանության Մեծամորի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ Մեծամոր քաղաքի աղբանոցում նորածնի դիակ կա:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Մեծամոր քաղաքի 23-րդ շենքի 14-րդ բնակարանի բնակչուհի, 15.08.1981թ. ծնված Պայծառ Ռաֆիկի Եղոյանը 2018թ. փետրվարի 21-ի լույս 22-ի գիշերը՝ ժամը 02 :30-ի սահմաններում, վերը նշված բնակարանի լոգարանում ծննդաբերել է արական սեռի նորածին : Ծննդաբերելու ժամանակ նորածինն ընկել է լոգարանի հատակի սալիկներին, որից մոտ երեք րոպե անց, երբ դադարել է նորածնի ճիչը, Պայծառ Եղոյանը, կարծելով որ նորածինը մահացած է, նրան դրել է պոլիէթիլենային տոպրակի մեջ և նույն օրը առավոտյան ժամը 06 :30-ի սահմաններում գցել է Մեծամոր քաղաքի 23-րդ շենքի մոտ գտնվող աղբամանը :

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 106-րդ հոդվածով հարուցվել է թիվ 81100318 քրեական գործը և կատարվում է նախաքննություն :

27.02.2018թ. Պայծառ Եղոյանը որպես կասկածյալ հարցաքննվելիս ցուցմունք է տվել, որ 2017թ. հունիս կամ հուլիս ամիսներին, ստույգ օրը չի հիշում, հղիացել է իր ամուսին Արնդրանիկ Ավետիսյանից, սակայն սոցիալական սուղ պայմաններում ապրելու և երեխաների հիվանդությամբ ծնվելու պատճառներով ամուսինն իրեն արգելել է հղիանալ, այդ պատճառով ինքը նրան չի հայտնել իր հղիության մասին և մշտապես լայն հագուստներ հագնելու և հիվանդանոցում որպես հղի չհաշվառվելու եղանակով քողարկել է իր հղիությունը :

2018թ. փետրվարի 21-ի՝ լույս 22-ի գիշերը, ժամը 02 :30-ի սահմաններում, երբ ամուսինը գտնվել է աշխատանքի վայրում և ինքը միայնակ է եղել տանը, զգացել է, որ պտղաջրերը հոսում են : Գնացել է տան լոգարան և կանգնած դիրքից սկսել է ծննդաբերել : Նորածինը գլխի հատվածով սկսել է ծնվել, ինքը որևէ ձևով չի միջամտել, ձեռքերով չի պահել նրան և ծնվելուց հետո նորածինը գլխի հատվածով ընկել է լոգարանի հատակի սալիկներին և սկսել է ճչալ : Այդ ընթացքում ինքը նորածնին գետնից չի վերցրել և զբաղվել է լագարանի լվացմամբ և իր արգանդում եղած նորածնի պորտալարի կտրմամբ : Մոտ 3 րոպե նորածինը գետնին ընկած ճչացել է, որից հետո դադարել է կենդանության նշաններ ցույց տալ : Ինքը տեսնելով, որ նորածինը կապտել է, ստուգել է

շնչառությունը : Պարզելով, որ վերջինս մահացել է նրան դրել է պոլիէթիլենային տոպրակի մեջ և թողնելով լոգարանում՝ գնացել ու պառկել է հանգստանալու : Առավոտյան ժամը 06 :30-ին նորածնին և նրա պորտալան ու ընկերքը պոլիթիլենային տոպրակով տարել ու գցել է իրենց շանքի բակում առկա աղբամանը :

Պայծառ Եղոյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին :

Կասկածյալ Պայծառ Եղոյանի ամուսին Անդրանիկ Ավետիսյանը ցուցմունք է տվել ան մասին, որ իր կինն իրեն անձամբ չի հայտնել հղիության մասին, սակայն ինքը կռահել է, որ նա հղի է : Սակայն կասկածներ ունենալով, որ կինն իրեն դավաճանել է չի հետաքրքրվել նրա հղիությամբ : 2018թ. փետրվարի 22-ին՝ առավոտյան ժամը 19 :30-ի սահմաններում, երբ վերադարձել է աշխատանքի վայրից նկատել է, որ իրենց տան լոգարանում արյան հետքեր կան : Նշված հետքերի կապակցությամբ Պայծառ Եղոյանն իրեն ասել է, որ ձեռքի մատն է վնասել, սակայն ինքը չի հավատացել և կասկածել է, որ կինը ծննդաբերել է : Ինքը չի իմացել, որ Պայծառ Եղոյանը երեխային տարել ու նետել է աղբամանն, այլ մտածել է, որ հնարավոր է մանկատուն տարած լինի :

Պայծառ Եղոյանի մասնակցությամբ կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ժամանակ վերջինս ցույց է տվել իր տան լոգարանն ու աղբամանը, որտեղ գցել է նորածնին :

Նշանակվել է դիակի դատաբժշկական և դատագենետիկական փորձաքննություններ, որոնց եզրակացությունները դեռևս չեն ստացվել : փորձաքննություն :

Պայծառ Եղոյանի՝ հոգեկան հիվանդությամբ տառապելու հանգամանքները պարզելու նպատակով գրություն է ուղարկվել <<Մեծամոր>> ԲԿ. Որտեղից դեռևս չի ստացվել պատասխանը : Նորածնի դիակից վերցվել են մազի ու արյան նմուշներ :

Արյան նմուշներ են վերցվել նաև Պայծառ Եղոյանից ու Անդրանիկ Ավետիսյանից :

Նշանակվել է դատագենետիկական փորձաքննություն :

05.03.2018թ. Պայծառ Եղոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 106-րդ հոդվածով :

Առաջադրված մեղադրանքում Պայծառ Եղոյանն իրեն մեղավոր է ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ ինքն ի սկզբանե նպատակ չի ունեցել սպանելու իր երեխային : Վերջինիս ծնվելու օրը եղել է խառնված ու շփոթված և երբ երեխան ծնվել է ինքը ձեռքերով չի պահել նրան որպեսզի չընկնի գետնին, թեև գիտակցել է, որ ընկնելու դեպքում երեխան կստանա լուրջ մարմնական վնասվածքներ :

Նկատի ունենալով, որ Պայծառ Եղոյանի մոտ հոգեկան հիվանդության առկայությունն ու բնույթը որոշելու, հանցագործության կատարման պահին նրա հուզական վիճակը և գործի համար կարևոր նշանակություն ունեցող այլ հարցերը պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության և դատական հոգեբանության բնագավառների հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244, 246-րդ և 248-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 81100318 քրեական գործով նշանակել դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ կից ,,Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն,, ՓԲԸ-ի փորձաքննությունների հանձնաժողովի փորձագետներին:

2. Փորձագետների պարզաբանմանը առաջադրել հետևյալ հարցերը.

- Մեղադրյալ Պայծառ Եղոյանը նախկինում և ներկայումս հոգեկան հիվանդությամբ տառապում է, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ է տառապում և երբվանից:
- Եթե Պայծառ Եղոյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա հանցավոր արարքը կատարելու պահին այդ հիվանդությունը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:
- Պայծառ Եղոյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:
- Եթե Պայծառ Եղոյանը անմեղսունակ է, ապա նա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կարիք ունի, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի:
- 2018թ. փետրվարի 21-ի՝ լույս 22-ի գիշերը, ժամը 02 :30-ի սահմաններում, նկարագրված հանցավոր արարքը կատարելու պահին Պայծառ Եղոյանը գտնվել է արդյոք հոգեկան խիստ հուզմունքի /ֆիզիոլոգիական աֆեկտի/ վիճակում :
- Հանցավոր արարքը կատարելու պահին Պայծառ Եղոյանը գտնվել է, արդյոք, այնպիսի հուզական վիճակում /հոգեկան լարվածություն, ֆրուստրացիա, շփոթվածություն, սթրես և այլն/, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության ու հոգեկան գործունեության վրա :
- Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև առաջադրված չեն սույն որոշման մեջ, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն հոգեբան-հոգեբույժ փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

3. Փորձաքննություն կատարելու համար փորձագետին տրամադրել սույն որոշումը << >> թերթից, իսկ քրեական գործի նյութերը անհրաժեշտության դեպքում կներկայացվեն լրացուցիչ:

4. Հանձնարարել փորձագիտական հիմնարկների ղեկավարներին՝ պարզաբանել փորձագետներին, որոնց հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու, առանց քննիչի թույլտվության քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին :

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ